

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ԻՐ ԿԱՏԱՐԱԸՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԱԿՆԱՐԿԵԼՈՎ

ՆՊԱՏԱԿԱՍ ԵՐԿԵՕՍՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ Է

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ԺՈՄՊԼԱԾ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցու-
թեան ղեկավար Ուալիտ Ժոնաթան Երեկ
Մուխթարալ այցելած բազմապար քաղա-
քայիններու հետ իր համադիմումներուն ըն-
թացքին ընդգծեց, որ ինք կոչ ուղղած է գոր-
ծադրելու Թաթքը եւ ոչ թէ ՄԱԿի թիւ 425
որոշումը:

Շարքաթվերջին բազմաթիւ քաղաքացի-
ներ, որոնց շարքին՝ Ազգային Ազատական
Կուսակցութեան նախագահ Տորի Շամուն,
Ֆրանսական համալսարանի ուսանողներ,
սիրիական քրիստոնէայ կրօնաւորներ եւ ժո-
ղովրդային պատուիրակութիւններ այցելե-
ցին Ժոնաթանին:

Այս հանդիպումներուն ընթացքին
Ժոնաթան վերահաստատեց, թէ սուրիական
ներկայութեան մասին իր յայտարարութիւն-
ները հիմնականին մէջ երկխօսութեան մը
սկսելու նպատակով էին, եւ թէ ինք պիտի
չընկրկի իրեն ուղղուած ամբաստանութիւն-
ներուն առջեւ, բայց իրեն եւ բոլոր սիրիացի-
ներուն ուղղուած բարոյական հարուածին
ու անարգանքին համար իրաւունք ունի բա-
ցատրութիւն պահանջելու:

«Իրծարծուած հարցերը կը մնան երկ-
խօսութեան նիւթ եւ պիտի շարունակեմ
ներքին տիպալի, պատուիրակներու եւ ժո-
ղովրդավարութեան ամրապնդման երթը»,
ըսաւ ան:

Սուրիոյ հետ լարուածութեան ակնարկե-
լով՝ ան յոյս յայտնեց, որ անիկա «անցնող
ամպ» մը ըլլայ միայն: «Սուրիոյ արանին մէջ
լիբանանեւսուրիական յարաբերութիւննե-
րը սրբազրելու յայտարարութիւն ունի մը
չէր, եւ իսպերուս պետք չէր, որ պատաս-
խանէին դաւանանքներու ամբաստանու-
թիւններով ու սպառնալիքներով. այնու-
հանդերձ պիտի սպասեմ այն ատենին, երբ
անոնք տրամադիր ըլլան բանական եւ
հանդարտ խօսակցութեան», ըսաւ Ժոնա-
թան:

ՄԱՔՍԵՐԸ ՊԻՏԻ ՆՈՒԱԶԻՆ

ԿՐՈՒԷ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ

Վարչապետ Ռաֆիք
Հարիրի Շարքաթ օր ընդու-
նեց ֆրանսական լրատու
գործակալութեան (Ա. Է. Ֆ.
Փ. Լ.) վարիչ խորհուրդի
նախագահ Պէրթրան Իվէ-
նոն, որուն կ'ընկերակ-
ցէին գործակալութեան
չըջանալին ու լիբանան-
եան զբոսանեակներու
անօրէնները:

Հանդիպումին Հարիրի
յոյս յայտնեց, որ 2001
տարուան ընթացքին
կ'ապագեալանաւորուին
եւ կ'արեւելանալանութեան ու
հարկաւորակցութեան մի-
ջոյնեցնող պետական ընկե-
րութիւնները, իսկ ինչ կը
վերաբերի Օմէրոյի, ապա
«ուսուցիչական» գոր-
ծընկերի մը պիտի վաճառ-
ւին անոր բաժնեկիցութե-
րու 20-25 առ հարիւրը,
մինչ ընթացիկ պիտի վա-
ճառուի շուկայի վրայ, եւ

այս գործընկերը պիտի ըլլայ
օտար ընկերութիւն մը:
«Եւրոպական հոսանք
արտադրելու եւ բաժնեկի-
ցութեան ծրագիրներուն
գործադրութեան համար
պիտի որդեգրուի Պի. Օ.
Թի. Ի. զրուցութիւնը», ըսաւ
Հարիրի, յայտնելով, որ
վերջինիս երկու բնագա-
ւառներէն հոգ պիտի սկսի
ջուրի ընկերութեանց
ապագեալանաւորումը:

Վարչապետը նաեւ հաս-
տատեց, որ վճարած է մեծ
նուազումներ կատարել
մուքատուրքին վրայ:

«22 միլիոն տոլարի
համող պետական պարտ-
քերու հարցը լուծելու հա-
մար ծախսերու կրճատ-
ման փոխարէն անհրա-
ժեշտ է աշխատիլ պետու-
թեան հասոյթները աւելցը-
նելու ուղղութեամբ»,
ըսաւ ան, ընդգծելով, որ

իր գլխաւորած կառավա-
րութեան առաջին որոշու-
մը հանդիսացած է «բաց
երկնքի քաղաքականու-
թիւնը» որդեգրելը: «Նոյն
ծիրէն ներս պիտի որոշուի
զիւրացնել օտար ներդը-
րողներուն լիբանանի մէջ
կառուած գնելը», նշեց ան:

Վարչապետ Հարիրի
նաեւ յայտնեց, որ ունի
եկամտահարկի մեղմաց-
ման ինչպէս նաեւ տուր-
քերը ընդհանրապէս թե-
թեցնելու ծրագիր:

Ան իր խօսքը եզրափա-
կեց հաւաստելով, որ «աշ-
խատանք պիտի տարուի
քաղաքներու օտար ընկե-
րութիւնները, լիբանանը
նկատելու իբրեւ ճարտա-
րարութեան կեդրոն, ուր
կրնան գտնել որակաւոր
կայց եւրոպականէն աւե-
լի աժան մարդու»:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԾՈՂԱՅԻ ՄԷՁ ՈՒՆԵՑԱԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Վարչապետ Ռաֆիք
Հարիրի Շարքաթ օր ժամա-
նեց Քաթարի մայրաքա-
ղաք Տոհա, զլրատելով
իսլամական խորհրդաժո-
ղովի կազմակերպութեան
վեհաժողովին Լիբանանը
ներկայացնող պատուիրա-
կուցութիւնը:

Տոհայի մէջ Հարիրին
զիմաւորեցին Քաթարի
վարչապետ շէյխ Ապտալ-
ա պըն իսաիֆ Ալ Սանի,
Լիբանանի արտաքին գոր-
ծոց նախարար Մահմուտ
Համուտ եւ Քաթարի մէջ
Լիբանանի դեսպան Աֆիֆ
Այուպ:

Ժամանումէն անմիջա-
պէս ետք Հարիրի իր կե-
ցութեան մարտին մէջ ժո-
ղով մը գումարեց նախա-
րար Համմուտի հետ եւ տե-
ղեկացաւ վեհաժողովին ար-
տաքապատուութեան հա-
մար գործարուած արտա-
քին գործոց նախարարնե-
րու ժողովի մանրամաս-
նութիւններուն:

Տոհայի մէջ, վեհաժողո-
վին զուգահեռ Հարիրի
երէկ ժողովներ գումարեց
Փաթիստանի նախագահ

Փերվիզ Մուշարրաֆի,
Յորդանանի Ապտալա
թագաւորին, Մալեզիոյ
Շարքաթ Էջ 10

ՇԵՅՆ ՆԱՍՐԱԼԼԱ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հրդպալայի ընդհա-
նուր քարտուղար շէյխ
Հասան Նասրալլա Շարքաթ
օր կուսակցութեան նախա-
տակներուն յիշատակին
նուիրուած հանդիսու-
թեան մը ընթացքին ար-
տասանած իր խօսքին մէջ
քննադատեց սուրիական
ուժերու Լիբանանէն հե-
ռացումը պահանջող յայ-
տարարութիւնները, նկա-
տել տալով, որ «խորախ-
եան մեծ սպառնալիքնե-
րուն ու շրջանային իրա-
դարձութիւններուն լոյ-
սին տակ այս պահը բոլոր
չափանիշներով ու շրջա-
նային եւ տեղական հաշի-
ւներով վստահարար ան-

յարմար է սուրիական ներ-
կայութեան հարցի ար-
ծարձումին համար»:

Շէյխ Նասրալլա նաեւ
զգուշացուց իսրայէլը՝ Լի-
բանանի դէմ ոտնձգու-
թիւնները շարունակելէ:
«Անոնք բռնարարեցին
մեր օդային սահմանները,
ուղարկեցին իրենց ուղղա-
թիւնները, եւ հիմա կ'ուզեն
չըջափակուիմ ենթակից
մեր շրջանային ջուրերը:
Այս բոլորը անպատաս-
խան պիտի չմնան», ըսաւ
ան:

Շէյխ Նասրալլա նաեւ
հաւաստեց, որ «անոնց
սպառնական ոճը երբեք
պիտի չյաջողի արդիւնք
տալ, որովհետեւ մեր հողի
ազատագրումն ու մեր
կանտարիքալիքներու ազատ
արձակումը կը մնան մեր
արդար իրաւունքը, եւ
մենք կառչած կը մնանք
անոնց»:

ԱՐՍԼԱՆ ԽՈՂԵՄՈՒԹԵԱՆ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ

Երեսփոխան Թալալ Արսլան երէկ հարց տուաւ, թէ
արդեօք խոհեմ քա՛ղ է այս հանգրուանին Լիբանանի
մէջ սուրիական ներկայութեան արծարծումը:

Ան նկատել տուաւ, որ ամբողջ շրջանը հրաբուխի
վրայ նստած կը թուի, եւ հաւանական է շղթայազե-
ծումը Լիբանանի ու Սուրիոյ դէմ իսրայէլեան լայնա-
ծիր պատերազմի մը, որ նաեւ աւելի պիտի ըլլայ պա-
ղեասինցիներու նոր տեղահանութեան մը: «Այս դաւի
առաջին թիրախը Լիբանանն է, եւ ջալամի քաղաքակա-
նութիւնը օգտակար չէ», ըսաւ ան:

Արսլան ըսաւ. «Ի տես մեր գոյութեան սպառնացող
այս վտանգին, բոլոր լիբանանցիները, իսլամներն ու
քրիստոնէաները, որոնց միակամութեամբ ու Սուրիոյ
զօրակցութեամբ կարելի եղաւ մեր հողի ազատագրու-
մը, խոհեմ պէտք է ըլլան մանաւանդ որ սուրիական
ներկայութիւնը վերջ դրաւ լիբանանցիներու միջեւ ջար-
դերուն, երկրի բաժանումին, եւ պաղեստինցի գաղթա-
կաններու բնակեցման դաւին, որ այժմ ըստ երեւոյթի
կեանքի կոչուած է»:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Միրէյ Գազանճեան եւ զաւակը՝ Յարութ
Տէր եւ տիկին Ժիլյէր Գազանճեան
Տէր եւ տիկին Գասպար Գազանճեան եւ զաւակուք
Տիար Աւետիս Գազանճեան
Տէր եւ տիկին Ժոզէֆ Գազանճեան եւ զաւակուք
Տիկին Անահիտ Վահագնաշեան
Տէր եւ տիկին Թովմաս Փափատովուլոս եւ զաւակուք
Օրդը. Մարի եւ Ժաքլին Գազանճեան
Տէտէեան ընտանիք
Ապր ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն,
հօր, եղբոր եւ հարազատին

ԺԱՆ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարքաթ, 11 Նոյեմբեր, 2000ին:
Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի,
12 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին Հայ Կաթողիկէ
Ս. Եղիա եկեղեցւոյ մէջ, Տեպպաս հրապարակ, ուրկէ
հանդուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրանսիայ-
պէքի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
● Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեա-
լին բնակարանը, երկուշաբթի 13 եւ երեքշաբթի 14
Նոյեմբերին, Ռայիէ, «Գազանճեան» շէնք, թիւ 20,
31րդ պողոտայ:

**Chez COCO**
SATURDAY - TAKE AWAY

ՀԱԼԵԱՅԻ ՕՐԹՈՍՏՐՈՍ
ՇԵՆ. 01-900933/22

ՕՐՈՒԱՆ ՃԱՇԸ
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. 13 ՆՈՅԵՄԲԵՐ
● Զաֆթա Սիմիյէ
● Ալուլթ Սան թէք,
Փիւրլոյկ

**ՃԱՇՒԷՆ ԳՐԱՍԵՆԱԿՆԵՐԸ ԵՒ
ԲՆԱԿԱՐԱՆԵՐԸ**
ՃԱՇՒԷՆ ԳՐԱՍԵՆԱԿՆԵՐԸ ԵՒ
ԲՆԱԿԱՐԱՆԵՐԸ

Ս. ՊԱՏԱՐԱԳ

ԳՊՐԵՎԱՆՔԻ ՄԱՏՈՒԹԻՒՆ ՄԷՁ

Գրեթե ամբողջ տեսչութիւնը ուրախութիւնը ունի
յայտարարելու, թէ Ն. Ս. Օ. Ս. Ս. Արամ Ա.
վեհափառի բարեհաճ տնօրհնութեամբ, Հայաս-
տանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչա-
կումի 1700ամեակին առիթով, Սուրբ եւ Անճախ
պատարագ պիտի մատուցուի Պիթիայայի Ս.
Աստուածածնայ մատուռին մէջ, դպրեվանքի ու-
սանդղներու երգեցողութեամբ, ամեն Ուրբաթ երե-
կոյեան ժամը 7:30ին:
Ջերմօրէն կը հրաւիրենք եւ կը քաջալերենք
մեր ժողովուրդի զաւակները, յատկապէս շրջանի
հաւատացեալները, մասնակցելու Սուրբ պատար-
ագին եւ հաղորդուելու մեր հայրերու հաւատա-
քով:
ՏԵՏՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ
15 ԴԵԿՏԵՄԲԵՐ
2000,
Լ. Օ. ԽԱՉԻ
«ԱՐՏԱՍ»
ՄԱՆԱՃՈՒԴ

**ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱՔԱԺԻՆ**
● Գրասենեակի կամ
դարձանատան յարմարու-
թեամբ: Նաիր Էլ Մոթի մայր
ընկերութիւնը, «Մերսե-
տես» ընկերութեան կից:
Շատ յարմար գին: ՇԵՆ.
01-248277 եւ 03-823545:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ
ԾԵՐԱՆՈՅ
ՏԻԿՆԱՆՅ
ՕԺԱՆԴԱԿԻ
ՆԱԽԱՃԱՇ
6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ
ԾԵՐԱՆՈՅ
ՏԻԿՆԱՆՅ
ՕԺԱՆԴԱԿԻ
ՆԱԽԱՃԱՇ
6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ
ԾԵՐԱՆՈՅ
ՏԻԿՆԱՆՅ
ՕԺԱՆԴԱԿԻ
ՆԱԽԱՃԱՇ
6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ
ԾԵՐԱՆՈՅ
ՏԻԿՆԱՆՅ
ՕԺԱՆԴԱԿԻ
ՆԱԽԱՃԱՇ
6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

S. U. R. T. Y. S. N. S.
մասնակցութեամբ **BIG BOOM**
● Խաղեր
● Պիմայարդարում
● Սուր խաղեր
● Մուլտիմեդիա
● Անակնկալներ
Շաբաթ, 18 Նոյեմբեր 2000,
կէսօրէ առաջ ժամը 10:00էն սկսեալ
DR. MICKEY
ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ
Ժամը 5:00ին «Բ. Աղասարգիսեան»
սրահին մէջ:

ԲԱԶԱԼԵՐԵՅԷ ՄԱՍԹԸՐ ՍՈՒ ՍՈՒՓԸՐՍԱՐՔԵԹԸ

ԱՎԱՐԴԱՆԵԱՆ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՉ ԿԱՍԿԱԾԵԱԼԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ

«21րդ դար» միջազգային անկախ ընկերակցությունների նախագահ Արկադի Գլազովի վարչապետների պաշտպանության մասին Մամուլի և հասարակական կապերի նախարար Վ. Վարդանյանի կողմից կարգավիճակով կը պատկերվի Հայաստանի ազգային անվտանգության նախարարության մեկուսացման մեջ:

Մ. Զաղիսյանը յայտարարեց, որ Ա. Վարդանյանը կ'ապաստանվի քրեական օրենսգրքի 65րդ յօդուածի ներքոյ դատախազության (Հայաստանի պետական եւ հասարակական կարգը բուժողական մարմինները կամ փոխելու կոչեր արձակել) եւ այս պահույնը ձեռնարկված է:

Ա. Վարդանյանի շահերը ներկայիս Մ. Զաղիսյանին զատ կը պաշտպանեն նաեւ ճանաչուած փաստարան Ռուսիայի Ռշտուրի:

Աւելցնենք, որ «21րդ դար» ընկերակցությունների նախագահին վարչական կալանքի տասնօրեայ ժամկէտը աւարտած է 9 Նոյեմբերին երեկոյեան, եւ աւ ընտանիքը ժամանակաւորապէս տեղափոխուած է ազգային անվտանգության մեկուսարան:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԷՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ 3800 ԳԱՂԹԱԿԱՆ

Գեղարքունիքի մարզպետարանի ընկերային պաշտպանությունների ղեկավարները, տուժանքներով, վերջին մէկ տարուան ընթացքին մարզին մէջ քաղաքացիութիւն տրուած է 3550 չափահաս գաղթականի: Յայտնենք, որ 1996 թուականին սկսած գործընթացին ի վեր, մինչեւ 1999 թուական, Հայաստանի քաղաքացիութիւն ստանալու խնդրանքով իշխանութիւններուն դիմած է ընդամենը 250 գաղթական:

Իսկ Գաւառ քաղաքին մէջ ապաստանած 22 գաղթական ընտանիքներու համար ՄԱԿի Հայաստանի գրասենեակը շուտով շահագործման պիտի յանձնէ չորս յարկանի ընտանիքներ: Հաւանական է, որ մինչեւ տարեվերջ գաւառի գաղթականներ, երկար սպասումէ ետք, բնակարան ունենան:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ 21ՐԴ ԴԱՐՈՒՆ ՀԱՄԱՇՆԱՐԿԱՅԻՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՅՈՎ

10 Նոյեմբերին Երեւանի Պետական համալսարանին մէջ իր աշխատանքներուն սկսաւ «Ուսանողական կազմակերպութիւնները 21րդ դարուն» համաշխարհայնացում եւ համագործակցութիւն» թեմայով ԱՊՀ երկիրներու ուսանողական կազմակերպութիւններու ղեկավարներու համագումարը:

Այս առիթով Երեւան ժամանած է Ռուսիոյ, Ուկրաինայի, Վրաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի մէջ գործող ուսանողական միութիւններու անդամ 25 պատուիրակ: Կը սպասուի նաեւ ազգայնական ուսանողական միութեան մը պատուիրակութեան այցելութիւնը:

Համագումարը, զոր կազմակերպած են Համահայկական Երիտասարդական Հիմնադրամն ու Երեւանի Պետական համալսարանի Ուսանողական խորհուրդը, նպատակ ունի արձակել ուսանողական կազմակերպութիւններու համագործակցութեան, միացեալ ծրագրերներու մշակման եւ իրականացման:

Ուսանողական համագումարի մասնակիցներուն ուղիւնցին Հայաստանի նախագահի խորհրդակցական Արմէն Գէորգեան, Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպանի ներկայացուցիչը, մշակութի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան փոխ նախարար Վահրամ Բարսեղեան եւ Համահայկական Երիտասարդական Հիմնադրամի գործադիր տնօրէն Արթուր Պօղոսեան:

ԻՐԱՆՅԻՆԵՐՈՒՆ ԵՌԻՏՐԸ՝ ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ

Հայաստանի մէջ Իրանի դեսպանութեան մշակութային կեդրոնը Հայաստանի Գիտութիւններու Ազգային ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկին նուիրած է 150 մեծարժէք եւ ուսումնասիրական բնոյթի գիրքեր, որոնք կը վերաբերին Իրանի պատմութեան գրականութեան, քաղաքականութեան եւ կրօնի հարցերուն:

Հիմնարկի տնօրէն իր. Նիքոլայ Յովհաննիսեան նշեց, որ իրանցիները նուիրած են փոքրիկ գրադարան մը, որ զգալիօրէն պիտի ամրապնդէ հիմնարկին աղբիւրագիտական հիմքը եւ պիտի նպաստէ իրանագիտութեան հետազոտողներու միջնորդութեան:

Այս առիթով 10 Նոյեմբերին ակադեմիային արեւելագիտութեան հիմնարկին մէջ կազմակերպուած էր գիրքերու ցուցահանդէս մը, որուն ներկայ էր նաեւ Հայաստանի մէջ Իրանի դեսպանի խորհրդակցական եւ մշակութային բաժնի պատասխանատու Ապու Թալեպի:

Ան իր արտասանած խօսքին մէջ կարեւոր նկատեց երկու երկրներու մշակութային համագործակցութիւնը եւ ըսաւ. «Այն, ինչ որ մենք ունինք եւ ուրիշները չունին, մեր ինքնութիւնն է: Երբեք մենք ինքնութիւն մը, որուն մէջ առկայ են եւ հայկական եւ պարսկական մշակութային արժէքները»:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՊԻՈՒՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

«ԱՐԱՐԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ»

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն ընդունման 1700ամեակին առիթով կազմակերպուող տօնակատարութիւններուն իր մասնակցութիւնը բերելու նպատակով Հայկազեան համալսարանին հայագիտական ամպիոնը ձեռնարկած է 2000 - 2001 տարիներուն վրայ երկարող դասախոսական շարքի մը: Այս ծրագիրը կը նպատակադրէ հայագիտական տարբեր բնագաւառներու մէջ համացած հայ թէ օտար մասնագէտներ հրաւիրել եւ դասախոսութիւններու միջոցով անոնց տիրապետած մարզերուն շուրջ տեղեկութիւններ ստանալու առիթ ընծայել իրանանահայրութեան:



Շահան Ծ. վրդ. Սարգիսեան Պատասխանատու Ղուսնակար

Պ. ԶԱՌՈՒԿԵԱՆԻ մարզերէն ներս, ինչպէս նաեւ ժամանակակից կարգով ներկայացնել հայ մեկնողական գրականութեան ձեռք բերած արդիւնքները:

Դասախոսը նիւթը քննարկեց հետեւեալ երեք հանգրուաններով:

1.- Վերնագրի բառերուն հասկացողութիւնը «Արարչագործութիւնը հայ մեկնողական գրականութեան մէջ»:

2.- Գրաւոր արդիւնքներու դասաւորում:

3.- Մեկնութիւններու համադրում, յատկապէս՝ վարդան Արեւելցիի հետ կապուած:

Շահան Ծ. վրդ. Սարգիսեան հանգամանօրէն մանրամասնեց վերոյիշեալ երեք կէտերը եւ անոնց մասին փոխանցեց մասնագիտական տեղեկութիւններ: Ան շեշտեց հայ մասնագիտներուն ոչ միայն հայ մեկնողական գրականութեան մէջ ունեցած ներդրումը, այլեւ՝ համալսարանի տեղեկական գրականութեան մէջ անոնց անուղակիօրէն բերած նպաստը:

Դասախոսութեան ետք ներկաներուն առիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու եւ կարծիքներ փոխանցելու:

Ձեռնարկին արարտին տեղի ունեցաւ հիւրամիտութիւն:

ԵՐԱՇՏԻ ՀԱՍՑՈՒՑԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ՝ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՆ ՄԷՉ

ՄԱԿի պարէնի եւ գիւղատնտեսութեան եւ պարէնի համաշխարհային ծրագրերը, միասնաբար ուսումնասիրելով Հայաստանի մէջ երաշտի հասցուցած վնասները, պարզած են, որ ընթացիկ տարուան հացահատիկի ընդհանուր բերքը (205 հազար թոն) նախորդ տարուան պակաս է 27 առ հարիւրով, իսկ գետնախնձորները (250 հազար թոն)՝ 40 առ հարիւրով:

Ստուգուած շրջաններուն, որոնք 4,7 միլիոն տոնարքը սնունդ աշխատանքի դի-

մաց, իսկ 5,2 միլիոն տոնարքը՝ իրրեւ պարէնային օգնութիւն:

ԱՐԿԱԳԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ ԿՈՒՆԵՆԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեան 9 Նոյեմբերին ընդունած է աշխատանքային այցելութեամբ Արցախ մեկնած Հայաստանի խորհրդարանական պատուիրակութիւնը, Ազգային ժողովի նախագահ Արմէն ինչաւորեանի գլխաւորութեամբ:

Հանդիպման ընթացքին նախագահ Արկադի Ղուկասեան կարեւոր նկատած է Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարաններու միջեւ կապերու ամրապնդման գործընթացը եւ վստահութիւն յայտնած է, որ այդ կապերով պիտի ամրապնդուի Հայաստանի Ազգային ժողովի՝ Արցախին ցուցարեքած աւանդական արկայնութիւնը:

Օգտուելով առիթէն, նախագահ Ա. Ղուկասեան Հայաստանի Ազգային ժողովի պատուիրակութեան անդամներուն շնորհաւորած է Հայաստանի՝ Եւրոպական Խորհուրդին անդամակցելու առաջնութեամբ:

Պատուիրակութեան անդամներուն ինչորանքով Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահը անդրադարձած է նաեւ 22 Մարտի մահափորձի դատավարութեան՝ նշելով, որ դատավարութեան կողմնակալ ըլլալուն մասին լուրերը չեն համապատասխաներ իրականութեան:

Ան կոչ ուղղած է Հայաստանի Ազգային ժողովի անդամներուն, վերոյիշեալ իրականութեան շուրջ համոզելու համար անձամբ ներկայ ըլլալ դատին եւ համապատասխան հետեւութիւնները կատարել: Ա. Ղուկասեան աւելցուցած է, որ ինչպէս մինչեւ հիմա ինք չէ միջամտած դատավարութեան, այսուհետեւ եւս ձեռնպահ պիտի մնայ անոր նկատմամբ:

Հանդիպման մասնակցած են նաեւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Օլէկ Եսայեան, Ազգային ժողովի նախագահութեան անդամները եւ խորհրդարանական խմբակցութեանց ղեկավարները:

ԴԱՍԱՍԿՈՍ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ Հ. Յ. Դ. 110ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սուրիոյ Երիտասարդական Միութեան «Դրօշակ» մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, Ուրբաթ, 20 Հոկտեմբերին, Դամասկոսի «Աւետիս Ահաւորեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. 110ամակի տօնակատարութիւն, որուն ներկայ էին Դամասկոսի մէջ Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչը, «Աւետիս Ահաւորեան» կեդրոնի ներկայացուցիչը, հիւրեր եւ բարեկամներ:

Բացման խօսքը արտասանեց Ռուբինա Եագուպեան, որմէ ետք ըմբռնողաբար խոսեց Լիւբիմիլիան, իր մարզած, Մելինէ Շիրանեան եւ Դաւար Գարակէօզեան կատարելու համար «Նոյի ազուաները» խմբային արտասանութիւնը:

Ցուցադրուեցան նաեւ ՍԵՄականներուն պատրաստած սահմանագրեր, որոնք ներկայացուցին Հ. Յ. Դ. 110 տարուան պատմութեան հիմնական դէպքերը:

Ապա Պատանեկան Միութեան «Ռոստոմ» մասնաճիւղի Ա. եւ Բ. կարգի անդամներ կատարեցին 2 յեղափոխական երգեր: Այնուհետեւ ըմբռնողաբար օրուան բանաստեղծ Տիգրան ձինպաշեան, որ իր բանաստեղծութիւնը սկսաւ հետեւեալ միտքով. «Դաշնակցութեան օրը հաշուետուութեան օր պէտք է ըլլայ, եւ քանի որ տօնակատարութիւն է, ապա այս պէտք է ըլլայ վաստակի գնահատման օր, եւ այդ վաստակը հսկայական է»:

Անդրադառնալով Հ. Յ. Դ. կազմաւորման պատմութեան՝ ան նշեց, որ Դաշնակցութեան ապակերպողացումն էր Դաշնակցութեան կազմակերպական կառուցիչի ողնայարը, որ մինչեւ օրս կը գործէ եւ այդ է, որ դարձաւ Հ. Յ. Դ. գործունէութեան յաջողութեան գլխաւոր գրաւականը:

Անդրադառնալով Դաշնակցութեան գործունէութեան՝ Տ. ձինպաշեան ըսաւ. «Դաշնակցութեան գործունէութիւններուն մէջ ամէնէն կարեւորն է մարդակերտումը, հայ ժողովուրդի նկարագրի բարեօրոյցումը: Այդ պէս ալ ստեղծուեցաւ իր իրաւունքին տէր, իր պատմութեան համար պայքար մղող եւ մեծնիլ գիտցող հայ մարդը»:

Իր խօսքը ուղղելով Երիտասարդութեան՝ բանաստեղծը նշեց, որ պէտք է Երիտասարդը քաղաքականաւոր եւ յեղափոխականաւոր, այն իմաստով, որ մեր իրականութիւնը յեղափոխելի եւ փոփոխելի իրողութիւն մըն է:

Տ. ձինպաշեան իր խօսքը աւարտեց հետեւեալ տողերով. «Մեզի փոխանցած հարստութիւնը իրաւօրէքը ղեկինք վաստակելու, պէտք է կարենանք ըսելը Արամ Արամեանի օրինակով, որ ըսաւ՝ վաղը, երբ արշալոյսը բացուի, յիշեցէք մեզ, այնպէս ընենք, որ օրին մէկը անպայման յիշեն մեզ»:

Դաշնակցութեան 110ամեակի նուիրուած տօնակատարութիւնը փակուեցաւ «Մշակ Բանուոր» քայլերով:

ԹՂԹԱՎԻՑ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՆԱՏՈՐԵԱԿԻՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՐՈՊՈՒՅԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՈՒԱՐՈՒԱՐԻ ԶՕՐԱՆՈՅ



Հայ Կաթողիկէ Մերոպեան վարժարանի աշակերտութիւնը՝ Ուարուարի գորանցին մէջ:

Լիրանայի անկախութեան տօնին նախօրեակին, Հայ Կաթողիկէ Մերոպեան վարժարանի նախակրթարանի 5րդ եւ 6րդ դասարաններու աշակերտութիւնն ու ուսուցչական կազմը 2 Նոյեմբերին այցելութիւն մը տուին լիրանայեան բանակի Ուարուարի գորանցին:

Այցելութեան նպատակն է մօտէն ծանօթանալ լիրանայի գորակողիկէ առօրեային եւ անոր օրնորակած ծառայութեան գնահատման հանգրուաններուն:

Այս առիթով աշակերտներ եւ ուսուցիչներ շրջեցան գորանցի գնահատման ժամանակը եւ ծանօթացան ներքին կանոններուն՝ տեղույն գիտնորական մարմինին ընկերակցութեամբ:

Այցելութեան արարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն մը՝ գորանցի ճաշարահին մէջ, եւ առ ի գնահատանք լիրանայեան բանակի զոհողութիւններուն՝ Հայ Կաթողիկէ Մերոպեան վարժարանի աշակերտութիւնը գորանցի փոխ հրամանատար գորավար Ապու Շաքր՝ յին նուիրեց վարժարանին շքանշանը:

Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻ

ԲԵԻԵՌԱՅՈՒՄ

Շ. Յ. Դաշնակցութեան 110ամեակին առիթով Արեւքի մէջ տեղի ունեցած տօնակատարութեան Յունաստանի Էայ Կապոյտ Խաչի անունով ՇՕՄի խօսքը կը փոխանցէ Մանգիկ Աշրեան

Կային պատկանելիութեան գիտակցութիւն, դարձաւ ազգային արժանապատուութիւն ներշնչող քաջ բազուկը, ազատութեան ռազմիրան: Արթնցուց Հայկի եւ Վարդանի անմեռ ոգին այն հայուն մէջ, որ վախկոտ ստրուկի հոգեբանութեամբ եւ անտեղեկ իր ազգային իրաւունքներուն ու հաւաքական կամքի հզօրութեան՝ դատապարտուած էր ուշ կամ կանուխ կորստեան:

Այսպէս, 19րդ դարու Եւրոպայի մէջ տեղի ունեցող քաղաքական թէ՛ ընկերային յեղաշրջումներու գործընթացին ծիրէն ներս, համազգային գարթօնքով մը վերածնաւ հայը եւ թափանցելով ազգիմացութեան, տէր կանգնեցաւ իր իրաւունքներուն: Այն կ'ստեղծէր, Դաշնակցութիւնը ազգային առողջ կազմափարսօսութեան մը գրեւորութեան էր:

Ան այդ համոզումով շարունակեց իր երթը, բարոյական ամուր հիմքերու եւ ժողովրդավար սկզբունքներու վրայ դնելով իր ողջ կառուցը: Գիտցաւ միշտ կ'ընդդաւնու սեւ ազգայինը անձնականէն կամ հասարակականէն եւ յանձնառու եղաւ գերադույն գոհութեան յանուն ազգին ու հայրենիքին, ամէն ժամանակաշրջանի տիրող քաղաքական պայմաններուն յարմար մարտավարութիւն որդի գրելով:

Իւրացնելով «Մահ իմացեալ անմահութիւն է» Վարդանանց նշանարանը՝ գլխաւոր դերակատարը եղաւ ազգային ազատագրական պայքարին, բայց երբեք չիւրացուց յայրենակներու Վերադարձուց զանոնք այն պատմական ժողովուրդին, որ իր միասնական կամքով եւ գերմարդկային սիրտքով կերտեց Մայիս 28ը: Վեց դարերու խաւարը փարատող առաջին արջալոյսը՝ անկար պետականութիւնը Առաջին Հանրապետութիւնը: Գիտցաւ ըլլալ նաեւ խաղաղ ու արժանապատուութեամբ կառուցող ուժ, հակառակ արեւնաբամ եղած ժողովուրդի մը դիմադրութեամբ ժողովուրդներուն: Ունեցաւ տակաւին քաղաքական հասունութիւնը անարիւն կերպով իշխանութիւն գրգռելու ամէն բանէ վեր դասելով հայրենի հողի եւ ազգի փրկութիւնը:

Այս բոլորը չեն նշանակեր անշուշտ, թէ անխախտ կամ «մեծի» մըն է Դաշնակցութիւնը: Բնական պիտի չըլլար, եթէ 110 տարուան իր կեանքի ընթացքին չուեննար վերելաբարձներ, թերացումներ, տկարութիւններ:

Պատմութիւնը, սակայն, կու գայ վկայելու, թէ իր հիմնական ընտրանքները եղան ճիշդ ու ազդողուս:

Ազատագրական պայքարի ընթացքին իր դերը, երկար ժամանակ գոհ չ'ընտանջ է ետք այն թիւր ըմբռնումին, թէ Դաշնակցութիւնը պատասխանատու էր ջարդերուն, այսօր միայն պատիւ կը բերէ ազգին, որովհետեւ բարձր մակարդակի ուսումնասիրութիւններ կ'ապացուցեն թէ Յեղասպանութիւնը Երկրորդ դարերու կողմէ մշակուած ազգային մաքրագործման յստակ ծրարիւ էր:

Որպէսզէն ազգային էր նաեւ իր 70 տարիներու կեցուածքը խորհրդային վարչաձեւի օրերուն: Ան մնաց հաւատարիմ անկախութեան կազմափարսին եւ իրրեւ սրբութիւն պահեց Եռագոյնը, Քայլերդն ու Չիմանչաղը, գատորոշելով պայմաններու պարտադրած անցողականը՝ յաւերժականէն: Անրեւի իր զրբքերուն վրայ, նոյնիսկ երբ կարճատեւ մօտեցումներ հայրենադաւնակատեցին իր կեցուածքը, կազմակերպ պահեց Սփիւռքը, միշտ հայրենիքին համար:

21 Սեպտեմբեր, 1991ին, երբ Եռագոյնը վերստին ծածանեցաւ հայրենի երկիրին, պատմութիւնը կու գար անգամ մը եւս արդարացնելու ազգային առողջ կազմափարսութեան կառուած մնալու հաստատ որոշումը: Իսկ ինչ կը վերաբերի երկրորդ անկախութեան յաջողող տարիներու ընթացքին Դաշնակցութեան գերբորոշման, պատմութիւնն է կարծեալ որ պիտի դատէ:

Կարելի չէ ստեղծել անտեսել, թէ ամէն պարագայի, նոյնիսկ առաջին տարիներուն իրեն համար ստեղծուած ծանր պայմաններուն, Դաշնակցութիւնը միշտ գերիվեր եղատեղով ազգայինը, ցուցարբեց զազաքական հասունութիւն:

Այնչառաբ, ոչ իշխանատենչ իր վերաբերումով, կը ջնանայ իր ներդրումը ունենալ հայրենիքի կայունութեան ու հզօրացման: Չօրակի կը կանգնի հերոսական Արցախի եւ կը շարունակէ արթուն պահել Սփիւռքը, միշտ համահայկական հայեցակէտէ մեկնելով:

Անուրանալի է նաեւ Հայ Դատի աշխատանքներու ծիրէն ներս իր տարած հետեւողական պայքարը, որ կ'արձանագրէ հանրապետանային շօշափելի նուաճումներ:

ՄԱՆՆԻԿ ԱՐԲԵԱՆ
Շարք էջ 8

Ավարդ Պետրոսեանի այս յօդուածը տարիներ առաջ տպագրուել է մամուլում: Սակայն «Շայտ Աշխարհ»ը գտնուել է, որ յօդուածում բարձրացուած հարցերը այսօր էլ հրատապ են, բայժնական եւ հեղինակի համաձայնութեամբ ներկայացնում է ընթերցողին:

Այս բառը սեւեռուն գաղափարի պէս հետապնդում է ինձ: Կարծուե՞ եմ՝ ոչ միայն ինձ: Կամ, աւելի ճիշդ, բառը չէ, հոգեվիճակը: Բեւեռացում:

Համընդհանուր համագլխային հոգեվիճակ է: Բեւեռացած, սեւեռուած ենք հին ու նոր գաղափարներին, անձնաւորուած թշնամական պոռթկումների խեղդող ճահճում: Մոլամիտ յամաութեամբ ոչնչացնում ենք մեր անհատականութիւնն ու կոտորակներով, մանրանալով, վերածում ենք բեւեռացուած գանդուածներին, հակոտնեայ, իրարամերժ, թոյլ, անպաշտպան: Քիւնախնդիր, մանրախնդիր, ստրկամիտ: Սեփական սուր հոտաութեամբ հրացան, ոմանք էլ ոտնակի են լինում այս կամ այն գաղափարական բեւեռացուած գանդուածի ծանրութեան տակ: Սրանք էլ իրենց պատեհապաշտ հոտաութեան վրայ բեւեռուած են կորսուած: Սրանց հարցը հեշտ է: Միայն բարոյական: Առանց արտասանքի սրանց ատուե՞ ես՝ ոտքի տակ մի՛ ընկէք:

Բեւեռացում բառը ամենաշատը օգտագործուած է հարուստների ու աղքատների մասին խօսելիս: (Մերոնց՝ հայ հարուստների եւ հայ աղքատների): Ասում ենք՝ տեղի է ունեցել ընկերային խաւերի բեւեռացում: Գերամբողջ իր ներքին քանի տոկոս շատ հարուստների ու մնացեալ շատ աղքատների: Մնացեալը գրեթէ ողջ ազգով՝ ժողովուրդն է հայոց: Աշխատասէր, շինարար, տաղանդաւոր, զինացկուն, տառապած, հերոսական հազարամեայ: Յաղթած:

Իմանա միջազգային փաստաթղթերում կոչուում է ազգայնակնութեան խոցելի խա՛ւ՝ խոցելիութեան մէկ տասնեակից աւելի աստիճանակարգով: Աստիճանակարգ երբ ըստ խոցելիութեան տարրեր են՝ քողարկուած ու բայց, ուրիշքուն անցած կամ ուրիշքունի նոր համա: Սակայն այս բոլորը իրենց տարբերութիւններով մէկ ընդհանրութիւն ունեն՝ թշուաւներ են, բեւեռացուած թշուաութեան կենսապարտիւնում: Միւս բեւեռացումները՝ թէեւ փոքր են որպէս անու...

Հարուստների մասին կամ ատելիութեամբ կամ յոխորտանքով ատուե՞ ենք՝ նոր հայեր: Թշուաւների մասին կամ ոլորում ենք, կամ լուում: Երկուսը դէպքում էլ նրանք չեն կշտանում: Բայց սրանք էլ են նոր հայեր: Այո՞, նոր են: Այդ ինչո՞ւ հարուստները նոր հայերի տեսակ են, աղքատները չէ՞: Կամ էլ սրանց ի նչն է նոր: Որ իրենց սեփականել կրկում աշտպարի հարուստ եւ այսպիսի աղքատ (եւ այսքան շատ աղքատ) հայ չի եղ: Ոչ մի տեղ չի եղել աշտպարի բեւեռացուած հակադրութիւն: Չգիտե՞մ՝ առաջ ինչպէս ուրիշներինը, օտարներինը ինչպէս էր, բայց այս նոր տարբերակը Հայաստանում անտանելի է: Անտանելի է իր հակադրութիւններ միասնութեամբ՝ գոհակութեամբ: Գոհակը, գրեթէ գալթակը կեցողիչը բան է աչք ծակող ամէն ինչ: Իսկ այսօրուան այս ծայրայեղ բեւեռացումները աչք են ծակում: Ի՞ դէպ, խորքում, հիմքում նոյն յաւիտենական արմատային են սերուած երկուսն էլ՝ փրկուած արմատային (Այսօր մենք իշխաններ ենք տեսնում, որոնք ոտքով են գնում եւ ծառաներ, որոնք նստել են նրանց ձիերին): Հետիտան իշխանները այլ խօսակցութեան թեմա են: Աստուած տար, աղէտը դրանք սահմանափակէր: Ողբերգութիւնն այն է, որ այս նոր ձիարսները իշխանների ձիերից բացի ուրիշ բաներ էլ են վերցրել ժողովուրդի արժանապատուութիւնը: Ժողովուրդը՝ որ պետութեանը միջին բարեկեցիկ խաւն էր՝ նրա քաղաքացին ու գիտնորը: Տէրն ու ծառան: Աւաղ, այդ խաւը գրեթէ այլեւս չկայ, հոգեվարքը մէջ է, որքան էլ հակառակը պնդեն մեր լաւատես պետական նոր այրերը: Գնացողները գնացին, մնացողները մնացին, ու ավտետուած ձկան նման թփրտում են թշուաութեանից: Տարբեր աստիճանակարգով այդ հոշրէ մի՞ դէմք ունի՞ մահ: Կեցողութեան հաստատագրուած կանոններին վարժուած, անճիւղն ու պարկեշտ այդ նախկին քաղաքացիները շարունակաբար վայրենի արագութեամբ յաջող նոր բարբերի, նոր կենսակերպի յորձանքի մէջ նետուել: Բնութեան օրէնք է, կ'անեն իմաստունները, չգիտեմ որբերուր ստացող աշտպարի շրջանն է՝ հոյամողէգները պիտի վերանա. խոտանները՝ մեծ, միամիտ գաղափարապաշտները պիտի վերանան: Նրանք, որ միջին խաւ անտանումը ուսած ազգի հոգեւոր, մշակութեային կենսոլորտի ստեղծողն ու սպառողն էին, գրեք զրոյը, առնողն ու ընթերցողը, երաժշտութիւն լսողն ու նկար դիտողը՝ դրանք ստեղծողը, գոհակութիւնների ու գալթակութիւնների որոմի միջից ոսկէ ցորնահատիկը դատողը, կարողում էին, լսում էին, դիտում էին, մտածում էին, յետոյ իրենք էին ստեղծում:

Նրեմն, սցիւտութեամբ, նրանց քաղքենու հետ էին շփոթում: Բայց նրանք մտաւորականներն էին՝ ուսակական անթարգմանելի չափագրութեամբ բնորոշուած: Ստեղծողը, պահապանն ու փոխանցողը: Մեր այգը հինց այդպէս էր բնորոշուում: Հինց նրանք էլ 1988ին ընդդաւնց կանցին ազգային իրենց տեսլիքին: Զինուորապարտեցին, յաղթեցին թշնամուն, այսօր պարտուած ու գլխահակ են իրենց սեփական տանը: Հացի անլուծելի խնդիրը ջարդել է իրենց ողնաշարը, մուրացկան է դարձրել:

Մուրացկանը էլ գինուոր չէ, պահապան չէ, ստեղծող չէ: Եթէ հրաշք պատահի ու յանկարծ վաղը բոլորս սկսենք միջին բարեկեցութեամբ ապրել, այս նոր մուրացկան հայերը, մէկ է, նոյնիսկ նրանց որդիները գինուոր չեն դառնալու: Դեռ մի քանի սերունդ նրանց արեւը պիտի մաքրուի իրենց պապերի այսօրուան ամօթի ու հոգեկան - ֆիզիքական փրկուածան յիշողութիւնից՝ կոտորուելու սպաննող բարոյաթից:

Ի սէր Աստուծոյ, յանկարծ կ'այացուեն, վերամբարձ ճշոցներով ոսկէ մէկը շփոթմի՞ մեզից մեզ պաշտպանել թէ՛ բա 15 թուին, երբ մերոնք գաղթական ու մահապուրծ, անգամ ամբրիկաներում ու ֆրանկոստաններում կարողացան ... եւ այլն, եւ այլն:

Նախ, նրանք 18 թուականից առաջ մի քանի հարիւրամեակ իրենց պետութեան մէջ չեն ապրել ու բազմաթիւ պատմական իրական փաստարկներ ունեն անհրաժեշտութեան դէպքում իրենց արժանապատուութիւնը պաշտպանելու: Թէեւ այնուհանդերձ, ամենահարուստներն էլ, ամենաշաղողակներն էլ, մէկ է, կորուստների յիշողութիւնից մոլագար իրենց շքեղ պատեաններն մէջ քողարկուած, դժբախտ մարդիկ էին: Սարսաղաբար վկայ: Դա դեռ դրսում, օտար ներկրում: Իսկ սեփական: Ամփոփեմ՝ մուրացկանը, նրա որդին, նրա որդու որդին գինուոր չեն, մուրացկան են: Նրանց կարելի է գոտով բանակ տանել, կոխել էլ կարելի է տանել, բայց մէկ է, նրանք Բեկոր, Դուշման, Պետո չեն: Խեղճ կոտորած մարդիկ են: Ո՛ւմ են պէտք: Իսկ յաղթելը հոգեվիճակ է՝ տան չորս պատերում ծնուած, սպառնալաշտուած իրագործուած է այդ հոգեվիճակը: Յաղթելը մտաղացուած է եւ իրագործում, ստեղծագործութիւն է: Ո՛րտեղ է մտաղացուելու այսօր այդ ստեղծագործութիւնը: Այս երկիր ո՛ր բեւեռներին, ո՛ր տեսակ նոր հայերի չորս պատերի ներսում: Ո՛ւր են այդ չորս պատեր: Չորս պատի գաղափարը ստանունել է: Դրա կատարեալ ամփոփ խորհրդաւորութիւնն ու խորհուրդը, որ հազարամեակներում է յղկուել, աշխարհագրուել ու ինչ որ մի ուրիշ բան է դարձել: Չգիտեմ լաւն է, թէ վատը այդ ինչ որ բանը, բայց մեղ յաղթանակի չի տանելու, որովհետեւ դեռ իւրացուած չէ: Կեցուցութեան սովորական ընթացքի մէջ կայուն, շարունակական՝ բարի լուս - բարի գիշեր հաստատութիւնը չունի: Անընդհատ սպասուող աղէտը այսօր կ'ընկենային հաղթեալութիւն եւ խուճապ է մտել այս պատերի մէջ, ու ոչ մի մնացուած երազ գաղափար չի կարող ծնուել այնտեղ: Սովորական, երկրային կեանքի պարզ ծրարի շէկա՞ ծնուել, դաւակ ծնել, աշխատել, կուակել, դաւակի դաւակի մեծացնել, պատուով ապրել, պատուով մեռնել: Հանգիստ, ձանձրալի, առօրեական, յաւիտենական՝ Ազգապահ: Այդ սուներն ու այդ առօրեականն էին պաշտպանելու այդ գինուորները, ոչ թէ նոր սնկի պէս բուսած պայտատներն ու պերճ խանութները: Նորից բեւեռացումների մասին ...

Նոր հայերի միջև՝ հարուստների տեսակն էլ գինուոր չէ: Սա մուրացկանների առաւել փտանգուող տեսակն է: Նորահարուստը հարուստ չէ: Նորահարուստը տոհմական մուրացկանն է: Բառախաղի պէս սեթեթեթ ստացուած միտքը, բայց ճշմարիտ են ատու՞ նորահարուստը տոհմական մուրացկանն է, քոտուորուած թշուաութեան ժառանգական արտաքինով: Նրա հոյու՞ գլուխը պիտուրը սարսափն է, խիղճն ու արժանապատուութիւնը չէ: Նա դեռ միայն մի չափանիշ ունի՞ փող: Գուցէ մի քանի սերունդ յետոյ ծնուել նաեւ նպատակը, հարցն ու պատասխանը, անցողիկի եւ անանցողիկի սահմանումը: Այդ ժամանակ թերեւս նա տոհմական մուրացկանից դառնայ տոհմիկ հարուստ, զպրոց ու եկեղեցի կառնեց, եթէ կենսքը խաղաղ ընթացած, եթէ ամէն ինչ չլրանայ ի շրջանս իւր: Գայ Աստուած: Այդ ժամանակ էլ նա կը հասկանայ, թէ ինչը եւ ինչպէս պիտի պաշտպանի, ու՞մ պաշտպանի: Պիտի պաշտպանի, որ պաշտպանուի: Զինուորին պիտի պաշտպանի, որ նրանով պաշտպանուի: Օրէնքը, իրաւունքը, պետութիւնը պիտի պաշտպանի, որ իր որդիներն ու թոռներն համար կառուցած չորս պատը պաշտպանուի: Ընդհանրապէս, որդիների համար կառուցուած տներն հիմքերն էլ, քարերն էլ մաքրու ու ամուր պիտի լինեն, թէ չէ 1988ի Դեկտեմբերի 7ի ահեղ նախագրուաշտուումը մոտացա՞նք, պիտու՞:

Ազգային կենցաղափարութեան մեր չափանիշները, որ ժուժկալ ու արժանապատիւ պատուիրաններով էին ամրագրուած, ո՞նց կարող ենք տրոհել այս դաժան ու բարձր լին լինողութիւնը, որ Հայաստան է կոչուում: Մեր լուծութիւնը մեր հոգեբանութիւնն է ու կեցուցութեան մեզ պարտադրուած կերպը՝ հպարտ, չափաւոր, յիմացկուն, երկնամերձ: Պապարի ու Քուրանաւարս երկիր չենք: Առեւտրաշահ երկիր ենք: Դրանք տարբեր հակացուցութիւններ են: Ասում են ամէն մարդ պիտի սնուի այն ստեղծողով ինչ իր երկրում է աճում ու ստեղծում, եթէ ուղում է առողջ ապրել: Այդպէս էլ ապրել ենք, օտարից վերցրածն էլ մեզից զուրկ էին: Սրանք լարի ենք ընդունել, իւրացրել: Ի՞նչ իրարձանք: Այսօր ինչո՞ւ ենք մեզ միայն սովորեցնում, ոչ ինչ շտապողութիւն: Այլեւս տալիք չունենք, միայն առնելիք ունենք: Այսպէս թէ այնպէս դասական ժողովուրդ ենք մեր կենսագրութեամբ ու տարիքով, պատմութեան հետիտան, բայց մեծ ճանապարհի ճամբորդ:

Շուտով ոչ միայն այս տարին, այլեւ այս հարիւրամեակը, այս հազարամեակն է վերջանում: Կառուկից մի զպացողութիւնը նաեւ այս գիտակցութիւնն է: Փոքրիկ, սովորութեան ու գիտութեան սարդոստայնի մէջ խճուած խելճ մարդու՝ փոքր երկրի խելճ քաղաքացուութեան, խնամքով պահուած սարսափներինց են դուրս պրծնում այս հարցերը:

al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.
(01)258222 – (01)268808
Fax: (01) 258223

ՀԱՄԻԿ ԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՏԵ
HAMPIG SAUSSONIC C- 88440
CSP - L.A.C. D -5- 232 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536
USA

Գրականություն և Աշակոյց

ԹՈՐՈՍԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ-ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ՀՈՒՆՉՔԸ



Ժանին Տառ, Ռապիա Պետրոսյանի Պեթա եւ Ալի Ռաուտան Շորպաթի:
Այս բոլոր սկանդալներն ալ, իրարմէ քիչ տարբերութեամբ, կը ցուցարբեն երկնազրեւու աշակերտ կարողականութիւն, որ իրենց արուեստը կը դնէ ամուր հիմերու վրայ: Անոնք բոլորն ալ, յարատեւելու պարագային, հնարաւորութիւն ունին դառնալու մշայուն արժէքներ իրագործող կերպարուեստագէտները:
Յարուելու թորոսեան ունի ուսուցանելու իր սեփական ըմբռնումներն ու հաւատամբը: Անոնց մասին ընդհանուր գաղափար մը կազմելու համար ստորեւ կու տանք մանկավարժական իր կարծիքները:

Դասաւանդութեան ընթացքին մեր գլխաւոր մտահոգութիւնն է պահպանել իւրաքանչիւրին անհատականութիւնը

ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՆՈՐԱՉԵՒՈՒԹԻՒՆ ՄԸ ՉԷ

Նկարչութիւնը ուղղուած է տեսողութեան: Բացարարութեան պէտք չունի ան:
Այնուամենայնիւ կ'ուզէի ըսել, թէ նկարչին մը կազմաւորումը կը սկսի դժգոյսութեամբ, ինչպէս երաժիշտինը՝ նօթագրութեամբ (solfege):
Ներկայիս նկարիչ մը կրնայ կազմաւորուել գեղարուեստից ակադեմիայի մը մէջ, վարպետի մը քով եւ կամ ազատ արուեստանոցի մը մէջ, ինչպիսին է մեր արուեստանոցը:
Նկարչութիւնը նորաձեւութիւն մը չէ, գիտութեան եւ արհեստագիտութեան յաւաքի մտածելները չեն կրնար փոխել ընթացքը արուեստին, որ կը պեղէ զգայուն աշխարհը մարդկային էակին, այլ անոնք կը ստատրեն իրեն:

Նմուշ մը՝ Թորոսեանի գործերն

Այդ էն իսկ կազմաւորուած ու իրենք գիրենք հաստատած գեղանկարչներէն քիչեր են անոնք, որոնք կը յաջողին նաեւ ուսուցչական ասպարէզին մէջ եւ կը քաջալերեն նորեկները:
Յարուելու թորոսեան ոչ միայն ինքզինքը հաստատած է իրեն գեղանկարիչ, այլեւ ձեռք բերած է այնքան ինքնավար աստիճան ու վեհանձնութիւն, որ կրնայ անվերապահօրէն քաջալերել ու խրախուսել բոլոր արժանաւոր աշակերտները:
Սակայն, թորոսեանի պարագային, «բացարձակ» ու, խրախուսելու չի նշանակեր միայն դրուատական խօսքեր ուղղել աշակերտներուն կամ ուսանողներուն: Այս մէկը կրնայ ինքնախարհու թիան



ՆՈՒՄՆԵՐ ԱՃԱԿԵՐՏԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

- 1.- Թալին Պալեան, 2.- Ինն Լիմպուրկ-Սուրու, 3.- Ապրտ Շորպաթի, 4.- Տանա Պէլք, 5.- Սիւզի Աբտի, 6.- Մարիկոն Կորթեթ, 7.- Մարտո Միտիլեան, 8.- Լիմա Շ. Շեհայաթը, 9.- Փամեա Փամօի, 10.- Ռաշտ Շորպաթի, 11.- Սիմօն Շուքէր, 12.- Ժանին Տառ, 13.- Ռապիա Պետրոսյանի Պեթա, 14.- Ալի Ռաուտան Շորպաթի:

մղել զանոնք: Որպէսզի երկնազրեւու կարողականութիւնը ամուր հիմերու վրայ դրուի, թորոսեան նախ կ'օժտէ զիրենք ակադեմիական կրթութեամբ եւ ապա կը վարժեցնէ սքանչալի ու յարատեւ աշխատանքի: Այս բոլորով հանդերձ, սակայն, այս վաստակաշատ ուսուցիչը ոչ միայն չի կաշկանդեր սկանդալներու ազատօրէն ստեղծագործելու մղումները, այլ նաեւ թափ կու տայ անոնց անհատականութեան ամբողջը մասն ու պարզացման:
Այս կ'ապացուցեն նաեւ իր աշակերտներուն այն ստեղծագործութիւնները, որոնք ցուցադրուած են Մէնթըր Տաղի-րի մէջ (Շարլ Հըլլու պոլորտայ, Պէյրութ):
Ցուցահանդէսին բացումը տեղի ունեցաւ Հինգշաբթի Երեկոյան, ժամը 6:00ին: Ցուցահանդէսին կը մասնակցին հետեւեալ երիտասարդ-երիտասարդուհիները. Ռեթի Թամպուրթի, Թալին Պալեան, Ինն Լիմպուրկ-Սուրու, Ապրտ Շորպաթի, Տանա Պէլք, Սիւզի Աբտի, Մարիկոն Կորթեթ, Մարտո Միտիլեան, Լիմա Շ. Շեհայաթը, Փամեա Փամօի, Ռաշտ Շորպաթի, Սիմօն Շուքէր:

Այնքան ատեն որ սէրը, մահը եւ լուսը գոյութիւն պիտի ունենան, արուեստը պիտի մնայ այն միակ միջոցը, որ կրնայ արտայայտել մարդ արարածին ուրախութիւնն ու տառապանքը:
Մեր նպատակն է ունենալ նոր տեսողութիւն մը (VISION) տարբեր մտեցում մը՝ զգայուն աշխարհին:
Դիտենք Լէոնարտո Տա Վինչին, որ բոլոր վերացապաշտներէն աւելի վերացապաշտ էր, զիրենք նաեւ Ռիպիենցը, Վերմէրը, Կոլան, Վան Կոկը կամ Մորիս Պիկասոն, որոնք նկատենք, որ անոնք ուրիշ աղբիւր չունին ներշնչումի, քան սրբազան բնութիւնը եւ անոր յաւատեանական օրէնքները:
Մենք կը հաւատանք սրբազան բնութեան, իր անստեղծութեան եւ կ'աշխատինք անկէ ստանալ երանութեան քանի մը վայրկեաններ... մեր աշխատանքին շնորհիւ:

ԱՐԵՊ ԱԶԱՏԵԱՆ ՈՉ ՄԻ ԲԱՆ ՔԵԶԱՆԻՑ ԶԻ ԿԱԽՈՒԱԾ

Հակառակ անոր որ «Գարուն» ամսաթերթը պատահնորէն համար յատուկ բաժին չունի, սակայն տասներեքամեայ Արեգ Ազատեանին արդարօրէն տրամադրուած է երեք էջ: Պատճառը անոր կանխահաս տաղանդն է ու գրականութեան մէջ ցուցաբերած բացառիկ շնորհը: Կարողացք ստորեւ տրուած անոր «Հարադրութիւնները» ու ... դատեցէք:

Մի տարօրինակ օր էր: Ոչ ոք չգիտէր, թէ ինչ էր կատարուելու պարտիզպան Սահակի հետ: Անգամ Սահակն ինքը չգիտէր: Ամէն ինչ սկսուեց նրանից, երբ նա մի նկար գտաւ: Հող էր փորուած եւ յանկարծ մի չոր բան նկատեց: Մի քանի րոպէ քարացած կանգնել էր: Շատ էր վախեցել՝ մտածում էր, որ գտածը ինչ-որ տուժիչ արկածներով լի: Կուսակցութիւնը հողի միջոց հանեց մի կտու: Հողն ու փոշին կտուի վրայից մաքրելով՝ տեսաւ մի գեղեցիկ գեղանկար: Սահակը նկարից բան չէր հասկանում, բայց նրան ինչ-որ բան ձգուած էր: Եւ փոխեց շորերն ու դուրս եկաւ այգուց:
Նա նկարը բռնել էր երկու ձեռքով, կարծես վախենում էր կորցնել: Ճանապարհին մի խանութ մտաւ ու տեղիք գնելու, յետոյ, յիշելով նկարը, շտապեց տուն: Ժամը եօթն անց էր քառասուն րոպէ: Սահակը ձեռքերը դրել էր նկարի վրայ եւ վայելում էր գեղեցկութիւնը:
Քիչ յետոյ, երբ ուզում էր դնել խոհանոցի մէջ վերջը՝ նկարը ինչ գործերով՝ արդէն կարողացաւ, թէ եւ ձեռքերն այլեւս կտուի վրայ չէին: Կարծես կորցրել էր խոհանոցի տեղը: Ամենահետաքրքիրն այն էր, որ նա իր գլխացի չէր տեսնում, առջեւում չկար ոչ մի բան: Պատուելով՝ Սահակը տեսաւ մի գեղեցիկ բնապատկեր: Նա ընտրութիւն չունէր, պէտք է առաջ գնար: Խորանայով անտառի մէջ՝ տարօրինակ ձայնը լսեց: Նրա վիճակը շատ վատ էր, չգիտէր, ուր գնար: Մի քանի անգամ փորձեց դուրս գալ անտառից, սակայն չյաջողուեց: Կամաց-կամաց մի ձայն էր մտնում: Դեղին մի կենդանի էր: Սահակը ձեռքը բարձրացրեց եւ վրան տեսաւ մի փոքրիկ, դեղին մողէս, որը վարձվում էր ու ձայնը արձակում: Մի պահ նա վախեցաւ, բայց յետոյ սկսեց ուշադիր գննել մողէսին: Մէկ էլ մողէսը վազեց, հիմա էլ նա էր վախեցել: Մողէսը փախում էր, սակայն Սահակը չէր կարող առաջ գնալ եւ ստիպուած եղաւ խորանայ անտառում ու կորցնել մողէսին: Դա մեծ հանելուկ էր Սահակի համար: Մողէսը կարող էր առաջ գնալ, իսկ Սահակը՝ ոչ, ինչն էր պատճառը: Այդ մասին միայն ինքը գիտէր եւ ինքն էլ պէտք է գտնէր պատասխանը: Երկար մտածեց Սահակը եւ հասկացաւ, որ նախ պէտք է Գամայ, թէ ուր է ընկել, եւ ապա՝ թէ ինչու է չի կարող առաջ գնալ:
Նա չէր խօսում, չէր ուզում, որ իր ձայնը լսուէր, վախենում էր: Նրա ետեւում չկար վերջ, նոյնքան էլ անյայտ էր դիմացը: Նա մտածում էր, որ ինքը սովորական մի մտաւոր է, որն անգամ կրթութիւն չի ստացել, մի պարտիզպան, որը հազիւ է ապրում եւ իր երկար կեանքում չի կարողացել հասկանալ կեանքի իմաստը: Նա իրեն պատճառ էր գտնում եւ չէր կարողանում հասկանալ մի բան, որ շատերը չգիտեն կեանքի իմաստը եւ շատ պատճառներով ընկնում են վատ վիճակների մէջ: Պարտիզպան Սահակը ինքն էր ընկել նկարի մէջ:

ԿԵԱՆՔ ԱՐԵՒԻՑ ՎԵՐԵՒ

Կանգնած էի մեր շէնքի մուտքի առջեւ: Դժուար է ասել, թէ ինչու էի կանգնած: Մի քանի րոպէ անց մի անծանօթ մտեցաւ եւ ինձ ասաց, որ մտնեմ մուտքից ներս: Ինձ թուաց, թէ խարուած է, սակայն նայելով նրան՝ հասկացայ, որ բարի մտքով է եկել: Մենք մտանք մուտքից ներս:

- Վերցրու այս գիրքը եւ կարդա:
- Ես հասկացայ, որ նա չէր ուզում մեր խօսակցութիւնը լսել, եւ այդ պատճառով էլ այնտեղ էի:
- Ի՞նչ գիրք է, - հարցրեցի:
- Երբ փոքր էի, մի մարդ ինձ այս գիրքը տուեց եւ ասաց. «Այս գիրքը կարդա եւ կը հասկանաս, թէ ինչ է կատարուած արեւից վերեւ»: Ես կարդացի եւ հասկացայ, որ գրքում գրուածի մասին մէկ մարդ էլ պէտք է իմանայ: Երկար ման եկայ այդ մարդուն, բայց յետոյ որոշեցի տալ սովորական մի աղյուս:
- Ես վատ զգացի, որ նա ինձ անուանեց սովորական, սակայն գիրքն այնքան էր ինձ հետաքրքրում, որ ուշադրութիւն չդարձրեցի նրա ասածին:
- Գիրքը թողեց ձեռքերիս մէջ եւ գնաց:
- Ես միայն կարողացայ ասել՝ շնորհակալութիւն: Ուզում էի մի քանի բան էլ ասել, բայց նորից ստացուեց շնորհակալութիւն: Երբորդ անգամ կրկնուեց յետոյ հասկացայ, որ շատ բան ունեմ ասելու այդ մարդուն:
- Ինչպէս միշտ, ես մի քանի տող կարդացի եւ գիրքը դրեցի մի կողմ: Այն սովորութիւնն էր, կարծես վաղուց գիտէի, թէ ինչ էր գրուած գրքում:

Արեւը բարձրանում, բայց չէր անհետանում: Նրա հայեացքը նոյնն էր:
Իմ կերպարը երկու տեղում էր: Չգիտեմ ինչու՝ այն չէր համապատասխանում իրականութեանը: Ես նստած էի մի խարսկի առջեւ եւ մտածում էի, թէ ինչու արեւը մայր չի մտնում: Նրա հայեացքն այրում էր իմ առջեւ գտնուող շիվերը, եւ ներքեւ լուրերը կարծես երջանիկ էին այդ տեսնուց, նրանք էլ էին վառուած, բայց վառուած էին իրենց ուրախ սրտերով:
Մի գուցէ այն անծանօթը գիտէր, որ այս գիրքը կարդալով հրաշքերի մէջ էս ընկնում:
Գիշեր էր: Արեւը լուսը փայլեցնում էր երկինքը՝ կարծես շողացող կարպաներ թռչէին:
Գրքի տառերը մանր էին, իսկ էջերը՝ շատ, այդ պատ-

ճառով էլ շանում էի աւելի արագ կարդալ:
Ես խօսում էի թուղի կարապետներին հետ, ինձ համար նրանք զրբից դուրս էին:
Եթէ իմ կերպարը երկու տեղ չլինէր, արեւը կը ծառայէր մէկ կէտ, իսկ այժմ այդ արեւը, որը երջանիկ հրեշտակի տեսք ունէր, ծառայում էր ինձ եւ եւս մէկ անգամ ինձ, այսինքն՝ մեզ:
Ինձ թուում է, որ արեւը երբեք չի անհետանայ, իսկ իրականում ես կարծում եմ, որ ժամանակն է գիրքը փակելու: Կարդացի եւս մի քանի էջ եւ պակեցի քնելու:
Անաւտեան արթնացայ շատ թեթեւ, կարծես ես էլ արեւի նման հրեշտակի հայեացք ունէի:
Մտածում էի գրքում գրուածի մասին: Թէ ինչու է մայրքան մտածում...
Անցան ժամեր, այդ գիրքն իմ կարդացածների մէջ ամենաերկարն էր:
Գրքում ես էի, բայց ուրիշ մտքով, եւ անծանօթը չէր սխալուել, որ ինձ էր տուել այդ գիրքը: Ամէն մարդ իր ձեռով կը պատկերացնէր գրքում եղածը: Ես պատկերացրեցի այնպէս, ինչպէս՝ կեանք արեւից վերեւ:

ԵՍ ԵՒ ԵՍ

Այդպէս էլ ես ինձ լաւ էի տեսնում:
Տեսնում էի, որ քայլում եմ ընկերներին հետ եւ որ մի քանիք տեղից ինձ եմ նայում: Մի մեքենայ մտեցաւ մեզ, դուները բացուեցին, եւ մի քանի վրնուած մարդիկ դուրս եկան: Ընկերներս վախեցան. նրանք հասցրեցին փախել, իսկ ինձ բռնեցին:
Վերելից տեսնում էի, թէ ինչպէս են ինձ հրելով մտցնում մեքենայի մէջ: Մեքենայի դուները փակուեցին, եւ ինձ տարան: Չգիտէի՝ ուր են տանում, սակայն հասկացայ, որ թէ չհետեւեմ մեքենային, կը կորցնեմ ինձ:



Կողքերիս վրնուած մարդիկ էին նստած, իրենց էին ձեռքերս եւ չէին թողնում շարժուել: Մեքենան այնքան արագ գնաց, որ չկարողացայ հետեւել: Քիչ անց կանգ առաւ, իսկ ինձ բռնողները, դուրս գալով, դուները կողպեցին:
Ամենաճիշդն այն էր, որ գտնէի ընկերներին եւ հարցնէի մեքենայի ու վրնուած մարդկանց մասին:
Ես փորձում էի մեքենայի դուրս րացել, բայց չէր յաջողում:
Եկայ տուն եւ փորձեցի գանգել ընկերներին: Ընդամէնը մէկն էր յիշում, թէ քանի հողի էին եւ ուր գնացին:
Ինձ դա չօգնեց. քանակն ու ուղղութիւնն իմ անալու համար բաւական չէին:

Տասներեք տարեկանի հայեացքով աշխարհը կարող էր ու համարեալ առակի ձեւով մէջ տեսնելու կարողութիւնը չափազանց հասունութիւն կարող է թուալ, կարող է թուալ, թէ գրականութեան ընթացիկ ըմբռնումները շատ են խոցելի, եւ այս դէպքում անպայման ողջունելի է Արեգի մտտը: Միւս կողմից Արեգն իր մտածողութեամբ երեւալու եւ իրօք երեւում է այսօրուան գրականութեան իրական ձեռքբերումները ցուցանող, որովհետեւ պատանեկան անմիջականութեամբ որոշակիօրէն գուզաւեալ է հաւաք ու համարձակ հայեացքը, որը միտք է պահանջում:

Անշուշտ դժուար է լինելու, չգիտեմ, թէ ինչքան է որոնելու, որպէսզի վերատիւ գտնի իր իսկ այսօրուան գտածը, բայց այդ որոնումը արդիւնքում նրան գրող է դարձնելու: Այս տարիքում կարող էր եւ չգրել, բայց գիրք նրա աշխարհը իր ուսուցիչի մէջ առել է չի թողնում այն տեսնել մերկ ու չոր. «Մի օր, երբ նա փոքր էր եւ պատկած էր իր բազմոցին, նկատեց, որ տեսնում է իր իսկ քիթը: Ուշադիր նայում ու շարունակ ուզում էր որ երեւնար քանի գտնէր քիթ վրայ: Երկար էր նայում քիթն եւ այդ պատճառով սկսեց թէք տեսնել: Երբ սկսեց թէք տեսնել, նորից մի քան նկատեց. հիմա էլ տեսնում էր գուլանուր մոլորակներ: Եւ մտածեց, որ աշխարհում ամենալաւ բանը գրելն է, որովհետեւ իր տեսածը կարող էր միայն գրել...»:
Ուրեմն, մաղթե՛ք արժանի ճամբայ:

Յանկարծ վեր թուալ եւ տեսայ, որ մեքենան շարժուում է: Իմ կարծիքով՝ մենք հեռանում էինք քաղաքից: Նստել էի մահճակալիս եւ մտածում էի, որ ինձ քաղաքից դուրս են տանում:
Մենք քաղաքից դուրս չեկանք, սակայն ես հասկացայ, որ իմ տնից շատ երեւ հեռացել: Ես խնդրում էի, որպէսզի նրանք ասէին, թէ ինչու է եւ ո՞ւր են ինձ տանում:
Դուրս եկայ տնից եւ փորձեցի յիշելով գտնել մեքենան:
Ինձ չպատասխանեցին, փոխարէնը դուրս եկան մեքենայից եւ գնացին: Մի պահ թուաց, թէ մեքենային դուրս րաց է, սակայն, երբ փորձեցի րացել, տեսայ մի ապակիէ շիշ, որը դուրսից թելով կապուած էր բռնակցից: Եթէ դուրս րացէի, շիշը կ'ընկնէր, եւ ձայնից նրանք կ'ը գային:
Ինձ համար ամենարդիւր բանը ինձ գտնելն էր. ես հարցնում էի բոլորին, սակայն ոչ ոք չէր տեսել ոչ այդ մարդկանց, ոչ էլ այդ մեքենան: Հետաքրքիրն այն էր, որ ես ինքս ինձ չէի թողնում ինձ գտնել:
Շարժ էջ 10

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ



ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ. - ԱՀԼԻ ՍԱՅՏԱՎ 2-1

Շարաթ յետմիջօրէին, Պուրճ Համուտի Բաղաբապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ ֆուտբոլի բարեկամական մրցում մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմին եւ ԱՀԼԻ Սալայի միջեւ: Մրցումը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով, 2-1 արդիւնքով: Հ.Մ.Ը.Մ.ի կողմէր նշանակեցին Գազիկ Սիմոնեան (փենալթիով) եւ ուղարկեցին Վասիլի Մոկան (երկուքն ալ Ա. Կիսախաղին):

Բաղաբապետարանի կատարած նախորդ մրցումին (Ախա ԱՀԼԻ Ալէյի դէմ), Հ.Մ.Ը.Մ. բարեկամած էր իր խաղարկուածները: Ժամակիցերը սկսած էին աւելի լաւ «հասկացուիլ» իրարու հետ: Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիան ընդհատեց 2000-2001 եղանակին նախօրեակին Հ.Մ.Ը.Մ.ի համար այս մրցումները վստահարար օգտակար են եւ պէտք է անշուշտ շարունակուին:

ՆՈՅՆ ՕՐԸ, երեկոյան ժամը 7:00ին, «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» դաշտին մէջ (Մըզէր) տեղի ունեցաւ պատմութիւնը՝ բարեկամական մրցում մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի տղոց եւ Բաղաբապետարանի միջեւ: Մրցումը վերջ գտաւ ի նպաստ Բաղաբապետարանի 74-60 (Կիսախաղ՝ 32-24, ի նպաստ Բաղաբապետարանի) արդիւնքով:

«ՎԱՅՍՐՈՅ» ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՆԸԺՄԷ - ՇԱՊԱՊ ՍԱՀԷԼ՝

1-0

«Վայսրոյ» բաժակի ֆուտբոլի մրցաշարին, Շարաթ օր, Պէյրութի Բաղաբապետարանի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումը Սաֆայի եւ Անարի միջեւ վերջ գտաւ 0-0 արդիւնքով, իսկ երէկուան մրցումը, որ տեղի ունեցաւ Նըժմէի եւ Շապապ Սահէլի միջեւ, վերջ գտաւ Նըժմէի յաղթանակով, 1-0 արդիւնքով:

Այսօր, տեղի կ'ունենայ Սաֆա - Ախա ԱՀԼԻ Ալէյ մրցումը՝ երեկոյան ժամը 6:00ին, դարձեալ Պէյրութի Բաղաբապետարանի դաշտին վրայ:

ՊՈՒՆՏՍԵՆԻԿԱ

ՀԵՐԹԱ ՊԵՐԼԻՆ - ՊԱՅԻՐՆ ՄԻՆԻՒՆ ՊԱՅԲԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Գերմանիոյ ֆուտբոլի ասոցիացիան (Պուներս-լիգա) ձեռնարկեց հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Հերթա Պերլինի եւ Չրդ դիրքը գրաւող Պայէրն Մինիւնի միջեւ երկու կէտի տարբերութիւնը մնաց նոյնը, որովհետեւ անոնք երկուքն ալ պարտութիւններ կրեցին իրենց մրցակիցներուն դաշտերուն վրայ:

Հերթա Պերլին 2-0 արդիւնքով պարտուած հեռացաւ Պուներսիա Տորթուներու դաշտէն, Լարս Ռիքերն (3րդ) եւ Ճիւլիան Թիլման (72րդ) նշանակած կողմերուն պատճառով: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Տորթունուս իրարձրացաւ 6րդ դիրքը:

Պայէրն իր կարգին Հերթա Պերլինի նման կրեց եղանակի իր 3րդ պարտութիւնը՝ 3-2 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Շալքէի դաշտէն, որ այս յաղթանակով իրարձրացաւ 3րդ դիրքը: Ճիւլիան Թիլմանի էլակէր (34րդ) եւ Փաուլ Սերթիո (59րդ) նշանակեցին Պայէրնի կողմը, իսկ Անարթէս Մէլլը (58րդ), Ժերալտ Ասամոս (68րդ) եւ Էլպէ Մէնս (71րդ)՝ Շալքէի կողմը:

Հերթա Պերլինի եւ Պայէրն Մինիւնի կրած պարտութիւններէն մեծագոյն օգտուողը եղաւ Պայէր Լեւերքուզը, որ 1-0 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Ֆրայպուրկի (16րդ) դաշտէն, իրարձրացաւ 3րդ դիրքը: Անիկա աշտմ Պայէրնի նման ունի 22 կէտ, սակայն աւելի տկար կ'ովրբից մը:

Բարթելն Ռամսելով նշանակեց մրցումին «օրը» կողմը (62րդ):

Այնթրախթ Ֆրանքֆորթ վերջ մը դրաւ Բայերն-Լաուսթընի վերելքին: անիկա վերջին չորս մրցումներուն չէր պարտուած եւ յաղթանակի մը պարագային աւելի ունէր գրաւելու 2րդ դիրքը, սակայն 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց ետք Ֆրանքֆորթի դաշտին վրայ, նահանջեց 3րդ դիրքը:

Համպուրկ նահանջեց 7րդ դիրքը, 4-2 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Բէյթի դաշտէն, որ իր արձանագրած այս յաղթանակէն ետք իրարձրացաւ 10րդ դիրքը:

Ստորեւ՝ 12րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Այնթրախթ Ֆրանքֆորթ - Բայերն-Լաուսթըն	3-1
Քոպպու - Շոթթֆորթ	2-1
1860 Մյունխի - Վոլֆսպուրկ	2-2
Հանգա Ռոսթոք - Ունիոն Բեռլին	2-2
Շալքէ - Պայերն Մինիւնի	3-2
Քեյտց - Համպուրկ	4-2
Ֆրայպուրկ - Պայերն Լեւերքուզը	0-1
Վերտր Պրեմար - Պոլտու	2-0
Պուներսիա Տորթունուս - Հերթա Պերլին	2-0

ԳԱՍԱՒՈՐՈՒՄ

1.- Հերթա Պերլին	24
2.- Պայէրն Մինիւնի	22
3.- Պայէր Լեւերքուզը	22
4.- Շալքէ	21
5.- Բայերն-Լաուսթըն	20
.....
16.- Ֆրայպուրկ	12
17.- Ունիոն Բեռլին	11
18.- Պոլտու	11

ԲԱԼՉԻՕ

Ա. ԷՍ. ՌՈՍԱ ԳՐԱԻԵՅ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 6րդ հանգրուանի մրցումներուն, Ինթեր Միլանի վիճակը դարձաւ աւելի մտահոգիչ, երբ իր դաշտին վրայ 60 հապար համակիրներու ներկայութեան 1-0 արդիւնքով տեղի տուաւ իր հիւրին՝ Լեչէի դիմաց, որ արձանագրեց եղանակի իր երկրորդ յաղթանակը:

Մրցումին «օրը» կողմէն նշանակուեցաւ 20րդ վայրկեանին, մինչ Ինթեր Միլան իր ունեցած մարկիւմը արտաւերութենէն չկրցաւ օգտուիլ եւ Լեչէ տասը մարկիւմով յաղթանակ մը արձանագրեց: Լեչէի մարկիւններէն մէկը 30րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացաւ. սակայն մէկ ժամուան առաւելութենէն չկրցաւ օգտուիլ Միլանի կայմը:

Եռվեկուս - Լացիօ Ռոմա շաբթուան ճակատումը վերջ գտաւ 1-1 արդիւնքով, 45 հապար համակիրներու ներկայութեան: Իկո Ռուտոր նշանակեց եռվեկուս կողմ (20րդ), իսկ Մարսելո Սալայ՝ Լացիօի կողմ (30րդ):

Ցարդ միայն մէկ յաղթանակ արձանագրած եւ մէկ պարտութիւն կրած Ֆիորենթինա արձանագրեց եղանակի իր 4րդ հաւասարութիւնը, 1-1 արդիւնքով հեռանալէ ետք Պոլոնիայի դաշտին: Ժուլիօ Քրուպ նշանակեց Պոլոնիայի կողմ (38րդ), իսկ Լեչէի դիմաց փենալթիով՝ Ֆիորենթինայի հաւասարութեան կողմ (64րդ):

55 հապար համակիրներու ներկայութեան Ա. Էս. Ռոմա 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրին՝ Ֆրանչէսքո Թոթիի (29րդ) փենալթիով եւ Վինչենցո Մոնթիլայի (70րդ) նշանակած կողմը:

Ա. Սէ. Միլան 3-1 արդիւնքով յաղթական վերադառաւ նախկին վերջին դիրքը գրաւող Պարիի դաշտին, արձանագրեց եղանակի իր 2րդ յաղթանակը: Օլիվըր Պիրոն (67րդ) եւ Անտոնի Շեվչենքո (74րդ) փենալթիով եւ 86րդ) նշանակեցին Ա. Սէ. Միլանի կողմը:

Ստորեւ՝ 6րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պարի - Ա. Սէ. Միլան	1-3
Պոլոնիա - Ֆիորենթինա	1-1
Ինթեր Միլան - Լեչէ	0-1
Փերուճիա - Նապոլի	1-1
Ա. Էս. Ռոմա - Ռեճինա	2-1
Վինչենցա - Վերոնա	2-2
Մալապերտա - Պրեշիա	2-0
Եռվեկուս - Լացիօ Ռոմա	1-1
Փարմա - Ուտինէտե	2-0

ԳԱՍԱՒՈՐՈՒՄ

1. Ա. Էս. Ռոմա	15
2. Արալանթա	14
3. Ուտինէտե	13
4. Եռվեկուս	11
5. Լացիօ Ռոմա	11
.....
16. Պրեշիա	2
17. Պարի	2
18. Նապոլի	2

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻՎԵՐՓՈՒԼ ՏԱՊԱԼԵՅ ՔՈՎԵՆՏՐԻՆ՝ 4-1

Անգլիոյ ֆուտբոլի ասոցիացիան 13րդ հանգրուանին, երէկ, Լիվերպոլ 4-1 արդիւնքով տապալեց Քովենթրին եւ օգտուեց իր արձանագրած 3րդ դիրքը՝ Մանչեսթըր Եունայթեդի եւ Արսենալի ետեւին: «Էնֆիլտ» մէջ կայացած այս ճակատումին, որուն ներկայ էր 44 հապար համակիր, կարմիրներուն կողմէր նշանակեցին Կէրի Մաքալիսթըրը, Սթիվըն Ժերարը եւ Էմիլ Էսթըր (2 կողմ), մինչ Քովենթրիի կողմ նշանակեց Տէյվիս Թոմսընը:

Երէկ տեղի ունեցաւ յաղթանակ մը եւս. Չելսի եւ Լիծ 1-1 հաւասարութիւն մը արձանագրեցին: Կուսթաֆ Փոյլթի նշանակեց Չելսիի, իսկ Մարք Վիտուէր՝ Լիծի կողմ:

Շարաթ օր, Մանչեսթըր Եունայթեդը 67 հազար համակիրներու ներկայութեան իր դաշտին՝ «Օլդ Թրեֆորտ» մէջ դժուար

յաղթանակ մը արձանագրեց Միտլդըրոյի դէմ, 2-1 արդիւնքով: Մանչեսթըրի կողմէր նշանակեցին Նիլ Կոլքերը, Նալանդը եւ Թեոֆիլ Կոլքերը, իսկ Պորթի կողմ՝ Քրիսթիան Բարամպէօ: Մանչեսթըր պահեց պարագլուխի դիրքը, երկու կէտի առաւելութիւն ունենալով Արսենալի վրայ, որ ճերմակ հաւասարութիւն մը արձանագրեց Տերալի Քաունթիի հետ, 36 հազար համակիրներու ներկայութեան:

Ասթոն Վիլա 2-0 արդիւնքով յաղթեց Թոթին՝ իր նշանակած կողմին: Ասթոն Վիլա տակաւին յետաձգուած մրցում մը ունի Լիծի դէմ եւ եթէ պատահի, որ յաղթէ, կրնայ 3րդ դիրքը իւրիւր կողմէր վերցնել:

Ստորեւ՝ 13րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Չելսի - Լիծ	1-1
-------------	-----

Լիվերպոլ - Քովենթրի	4-1
Արսենալ - Տերալի Քաունթի	0-0
Ասթոն Վիլա - Թոթինհեմ	2-0
Պրեսթոն - Էվերթոն	0-1
Իփսուիչ - Չարլթոն	2-0
Լայպեր - Նիքերսթրի	1-1
Մանչ. Եունայթեդ - Միտլդըրոյ	2-1
Մանչեսթըր - Սաութհեմթոն	2-2
Ուեսթ Համ - Մանչեսթըր Սիթի	4-1

ԳԱՍԱՒՈՐՈՒՄ

1. Մանչեսթըր Եունայթեդ	30
2. Արսենալ	28
3. Լիվերպոլ	24
4. Լայպեր Սիթի	23
5. Ասթոն Վիլա	22
.....
18. Միտլդըրոյ	10
19. Տերալի Քաունթի	7
20. Պրեսթոն	7

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԸՏԱՆ՝ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 15րդ հանգրուանին, Սըտան 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մարսելը եւ առանձնացաւ պարագլուխի դիրքին: Սըտանի կողմէր նշանակեցին Օլիվիէ Բիւթը եւ Սեուրիք Միոնէ:

Փարիզ Սէն ժերմէն նահանջեց 3րդ դիրքը եւ երկրորդ դիրքը վիճեցաւ Պարիզի Փարիզեան կայմը 1-1 հաւասարութիւն մը արձանագրեց Լիոնի հետ, մինչ Պարիս Սթարկ

պուրկէն վերադառաւ 2-0 յաղթանակով: Փ. Ս. ժ. - Լիոն մրցումին, մայրաքաղաքի խումբին կողմ նշանակեց Լօրան Ռուպիլի փենալթիով, իսկ

Ստորեւ՝ 15րդ հանգրուանի արդիւնքները:

Սթարկ - Պարիս	0-2
Փ. Ս. ժերմէն - Լիոն	1-1
Սըտան - Մարսել	2-0
ՄԷ - Կեկլան	1-1
Լիլ - Օքսել	1-1
Ռենն - Թուլուզ	1-0
Թուլուզ - Լանս	1-0
Սենթ Էթիէն - Մոնպեր	1-0

ԳԱՍԱՒՈՐՈՒՄ

1.- Սըտան	28
2.- Պարիս	26
3.- Փ. Ս. ժերմէն	25
4.- Լիլ	23
5.- Թրուա	23

ԿՈՓԵՍՄԱՆՍ

ԼԻՆՈՔՍ ԼՈՒԻՍ ՊԱՅԵՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆԻ ԻՐ ՏԻՏՂՈՍԱԸ




Լինոքս Լուիս

Բրիտանացի սեւամորթ Լինոքս Լուիս Շարաթ օր Լաս Վեկասի մէջ պարտութեան մատնեց ամերիկացի (ծագումով սամոացի) Տէյվիթ Թուան եւ պահեց կռիւմ-մարտի աշխարհի ասոցիացի տիտղոսը՝ միջազգային ֆետերասիոնին եւ աշխարհի կռիւմ-մարտի խորհուրդին կողմէ ընդունուած:

12 հազար համակիրներու ներկայութեան կայացած ճակատումը եղաւ սուր՝ 35 տարեկան Լուիսի եւ 27 տարեկան Թուանի միջեւ: Իրաւարարները մրցումը աւարտեցին 12րդ ռաունտի աւարտին եւ Լուիս կէտերով հաջողուեցաւ յաղթական:

ԹԵՆԻՍ. ԼԻՆՈՒՄ ՄՐՅԱՇԱՐՔ

ՔԼԵՄԱՆ ՅԱՂԹԵՅ ՌԱՖԹՈՐԻՆ ԵՒ ԱՐԺԱՆԱՅԱԻ ՏԻՏՂՈՍԻՆ



Անո Քլեման

Լինոսի թենիսի միջազգային մրցաշարի աւարտական մրցումին, ֆրանսացի Անո Քլեման պարտութեան մատնեց աւստրալիացի Փարիք Ռաֆթորը՝ 7-6 եւ 7-6 արդիւնքով եւ շահեցաւ իր ասպարէզի առաջին տիտղոսը:

Քլեման, որ կհասարակապէս բախտատու դուրս եկած էր, երբ ամերիկացի Անտոն Կլասի վիրատու ըլլալով մրցումը չէր աւարտած եւ հետեւաբար ան յաղթական հռչակուած էր, երէկուան ճակատումին ունեցաւ բացառիկ խաղարկութիւն: Յամենայնդէպ մրցումին արդիւնքը լուսազոյն կ'ապացուցէ, թէ որքան սուր եւ անշուշտ հաւասար եղաւ պայքարը մրցակիցներուն միջեւ:

ԳԵՏ

1.- Քլեման	28
2.- Պարիս	26
3.- Փ. Ս. ժերմէն	25
4.- Լիլ	23
5.- Թրուա	23

